

վում է թղթի վրա,—կը տեսնէք որ նրա խմբագրին էլ կը սկսի ընդդիմաբանել: Նա յիշեցնում է այն մարդկանց, որոնց մտածողութեան եղանակը հետեւեալն է. «աւելի լաւ մի անմտութիւն էլ է ասում, քան թէ լռել»:

Եւ ահա ասում է: Բայց ինչ է ասում:
«Մուրճը» համաձայն է, ասում է, որ վերջին տարիներս հայկական քնարը կոտորվել, անդունդն է ընկել:

«Մուրճը» համաձայն է, ասում է, որ վերջին տարիներս մի փոքր էլ շատեց աչքի ընկնող բանաստեղծ չէ դուրս եկել:

Նա այդ բոլորն ասում է, բայց մտանայով իր ասածը, աւելացնում է. «Մուրճը» երեկի բանաստեղծներ է ծնել, «Մուրճը» բանաստեղծութիւն է մշակում, ընթերցող հասարակութիւնը հաւանում է «Մուրճի» բանաստեղծութիւնները:

Պէտք է խոստովանել, որ ես չեմ վստահանայ նորից վրդովել այդ ամսագրի քննադատական խմբագրութեան անդորրութիւնը, եթէ նա ինչ ուզում է անել, բայց հասարակութեան համար կը լինի անհարկ, որ ես և գովասանքս իր վրա մատնանիշ չանէր:

Ո՞վ է այդ հասարակութիւնը: «Մուրճը» տպագրում է մի հատ «Նամակ խմբագրին» (որը, չը գիտեմ ինչպէս, շատ և ձաւրախանաւն է դուրս եկել), և այդ հիմք է տալիս երկարացնելու, թէ՛ հասարակութիւնը հիացել է «Մուրճի» բանաստեղծութիւններին:

Տարաբաղաբար, որքան նկատված է, հինց այդ ինքնախաբէ ու թիւնն է, որ դարձել է այդ ամսագրի անաղիստութեան գլխաւոր մի պատճառ:

Կը վերկենայ մի որ և է շողորմ ռոտանտոր-գրող և կը գրէ խմբագրին. «Ձեր ամսագրի ամենալաւ բաժինը բանաստեղծականն է. դուք ստեղծում եք բանաստեղծներ: Խնդրեմ տպագրէք իմ ներփակեալ բանաստեղծութիւնը. իմ առաջադիմութիւնը կախում է ձեռնարկից».— և ահա չը հասկանալով այդ տեսակ շողորմութիւնի փորագրուել, խմբագրի մի քանի օրից յետոյ գրում է. «Մուրճի» խմբագրի տանուղ (ինչ հայեցէն է) բաժիններից մէկը բանաստեղծութիւններն են. հասարակութեան ամենաքննադատական մասը ինչպէս կ'ազդէ իր վրայ:

Եթէ «Մուրճը» իր պատասխանի մէջ հարցն այնպէս դնէր, թէ խմբագրութիւնը, ըստ իր հասկացողութեան, տպագրելով տասնեակ ռոտանտորներ իւրաքանչիւր համարում, պատրաստ է պաշտպանել դրանց արժանաւորութիւնը, այն ժամանակ ես կը դիմէի փաստերին, և նոյն իսկ այդ անվերջանալի ռոտանտորներից օրինակներ բերելով՝ կ'ապացուցանէի, որ եթէ «Մուրճի» խմբագրի տանուղ բաժիններից մէկը բանաստեղծութիւններն են, այն ժամանակ աւելի լաւ է, որ իսկի չը լինի այդ բաժինը և դրանով «Մուրճի» փոքրաթիւ ընթերցողները ոչինչ չեն կորցնի: Բայց ցուրտ նրանումն է, որ ամսագրի խմբագրութիւնը աւելի ինքնապաշտպանութեան շատ համարձակ եղանակ է դիմում.— նա հասարակութեան ամենաքննադատական մասի համակրութեան և գովասանքի վրա է մատնանիշ անում:

Կրկնում ենք: Որն է այդ ամենաքննադատական հասարակութիւնը: Արդեօք և ձաւրախանաւն գրված «Նամակ խմբագրին», թէ փորագրուեցող «ռոտանտորներ հիւսող», թէ ամսագրի երկու-երեք հարիւր բաժանորդները, որոնց մի մասը ամսագրի թերթերն անդամ չէ կտրում:

Մի սխալ պրիկ «Մուրճի» խմբագրին:

Անցեալ ամառ թիֆլիս հիւր էր եկել հայոց գրականութեան մէջ շատ նշանաւոր մի անձ: Մի քանի հոգի տեսութիւն էինը գնացել նրան: Ի միջի այլոց նա հարցնում էր, թէ ինչ նոր բան կայ գրական շրջաններում: Ներկայ եղողներից մէկը թեց մի քանի նորութիւններ և ի միջի այլոց ասեց. «այժմ մի ամսագիր էլ ունենք» «Մուրճը»:

—Մի բան ինձ դարմանում է,—ասեց յարկելի հիւրը. շատ տեղերում զանազան տներ մանելով ես տեսա «Մուրճը» սեղանի վրա դրած, բայց շատ տեղ նրա թերթերն անգամ չէին կտրում: Ինչով բացատրել այդ բանը. միթէ չեն կտրում:

«Մուրճի» խմբագրին ենք թողնում բացատրել այդ բանը. եթէ ուզում է թող թերթեր չը կտրենք էլ հասարակութեան ամենաքննադատական մասի համակրութեան նշան համարի:

Ես չեմ թաքցնում: «Մուրճի» բանաստեղծա-

կան բաժինը ոչ թէ չեմ համարում այդ ամսագրի «խմբագրի տանուղ բաժինը», այլ նրա ամենաթիւ, անպէտք բաժինը: Եթէ ամսագրի մէջ կան լաւ բաներ, այդ պէտք է որոնել նրա միւս բաժիններում, որոնք գուցէ, ըստ պ. Արամյանի, այնքան էլ «խմբագրի տանուղ» բայց որոնք աւելի լաւ են հինց այն պատճառով, որ այնտեղ խմբագրի «գրիչը և կապրիչը» աւելի փոքր դեր, կամ ոչինչ դեր չէ կատարում...

Խ. Աղ—Լէր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրներում կարգում ենք, որ առաջիկայ դարձան, Պարսից Շահը մի յատուկ դեսպան կուղարկէ Պետերբուրգ, զանազան ընծաներ մատուցանելու թագաւոր Կայսրին:

Թիֆլիսի ղեկավարական հիւանդանոցը հեռագիր ստացաւ Բերլինից, որ շուտով ուղարկելու է հիւանդանոցի անուշտով «Կոլին» ասված հիւրը: Այդ հեղուկը ստանալուն պէս հիւանդանոցում կը սկսվեն փորձեր:

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Գորու գաւառի ցրտիւնով ասված աւանում քանի մի ժամանակ առաջ բացվել է հայոց Բարեգործական ընկերութեան ճիւղը:

Երկու ուսուցիչ-բժիշկներ այս րոպէիս ահալին պրակտիկա ունեն Ամերիկայի Բոստոն քաղաքում: Տիկին Բերլին, որն իր ուսումը աւարտել է Եւրոպայի Բերլին քաղաքում, մեծ հռչակ է ստացել Բոստոնում, որպէս վիրաբոյժ, իսկ տիկին Չալի-ժեկիկ նորեւում նշանակվել է գլխաւոր բժիշկ Բոստոնի քաղաքային հիւանդանոցում:

Մի օտարուհի, տիկին Շուռ այժմ կ'օնցեւորենք է տալիս Պետերբուրգում: Բայց այդ տիկինը ոչ անձն է որ և է երաժշտական գործիչ վրա, ոչ էլ երգում է,—այլ շուտանում է: Նրա շուտանը այն աստիճան կատարելագործութեան է հասել, որ նման է իր հիւանդանոցի փոքրիկ Ֆրէյտային: Տիկինը իր առաջին կ'օնցեւորում շուտանը Չայ-գուրու ՍՈՍՅՈՒՆ ԱԵ ԻԿՍԱՆ, ապա զատարոց վերջին, Դիլերի, Մոչիկովսկու և ուրիշների պիէսները: Շուտանող տիկինը վարձատրվեց կ'օնցեւորին ներկայ գտնված հասարակութեան բոլոր ծափահարութիւններով:

Թիֆլիսի հայ քահանայ տէր-Շմաւոն Տէր-Բարսեղեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Ձեզ յայտնի է չքաւոր հայ օրիորդ Սոմեանի մասին, որի համար հանգանակութեամբ գումար էր ժողոված ձեզ մօտ: Այժմ իմ ձեռքով դարձեալ ժողոված է 123 ռ., 40 կօպ., և ես աշխատեցի նշանադրել այդ օրիորդին մի հայ երիտասարդի հետ, որի հետ նա շուտով էլ կը պսակվի: Թէ ձեզանից ստացած նախկին ժողոված փողը և թէ վերջին հանգանակածը՝ ինձ մօտ է գտնվում»:

Որովհետեւ օրիորդ Սոմեանի համար հաւաքած բոլոր փողերը, որոնք մի խմբագրատան էին գտնվում, մինչ յանձնելը արդէն դրա մասին խնամք տանող անձանց, իսկ մեզ մօտ մնացել էր այդ փողից միայն 3 ռուբլի, ուստի մենք այժմ այդ վերջին 3 ռուբլին էլ յանձնելը տէր-Բարսեղեանց քահանային և մեր հաշիւները կատարելու պէս վերջացրինք օրիորդի մասին խնամք տանող անձանց հետ:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութիւնը պատիւ ունի յայտնելու, որ կիրակի, դեկտեմբերի 23-ին, տեղի կունենայ Թիֆլիսի ժողովարանում պարահանդէս յօգուտ նոյն հայոց բարեգործական ընկերութեան: Պարահանդէսի սկիզբը՝ երեկոյեան 9 ժամին: Տոմարների գինը՝ տիկիններին համար 1 ռուբլի, իսկ պարոնների համար 2 ռուբլի»:

Թիֆ գիւղից գրում են մեզ հետեւեալը. «Ցորերը սկսվելուն պէս գիւղացին մատնուում է 4—5 ամսվայ անգործութեան, այժմ նրա աշխատանքի, քէֆի և մշտական պարագմունքի տեղը դուրսն է, ուր նա անց է կացնում գիւղերը և վատնում է իր վերջին կօպէկները: Ի հարկէ, այդ քէֆերից անբաժան են կուխներն ու անբաւարարութիւնները, որոնք յաճախ դանդաղում են վեր-

ջանում: Բայց այս էլ պէտք է ասել, որ մեր գիւղում կայ արհեստագործների մի խումբ, որը ձմռանայ երկար գիւղերն իր համարա կէտը անց է կացնում աշխատութեան մէջ և կարող է օրինակ լինել անգործ և արքեպոստոսի նուիրված գիւղացիների համար»:

Բազուի մեր թղթակիցներից մէկը մօտերս գնալով իր հայրենի շաքի գիւղը, հետեւեալ տխուր գոյներով է նկարագրում այնտեղի դրութիւնը. «Գիւղում կազմակերպվել է շարագործներին մի խումբ, որը իր աւագակութիւններով մարտի է դրել ոչ թէ միայն շաքի գիւղի, այլ և շրջակայ գիւղերի ազգաբնակչեան վրա: Գիւղացիք դրանց դէմ ոչինչ միջոցներ ձեռք չեն կարողանում առնել, որովհետեւ երբ փորձել են դանդաղել այդ խմբի անդամներին շարագործութիւնների դէմ, անմիջապէս իրանք վրէժնորդութեան են եղել: Գանի քանի անգամ դաւաճապետ ուսուցանութեան միջոցով պահանջել է շաքիցիներից մասնացոյց անել շարագործներին, բայց նրանք հրաժարվել են դաւաճապետի պահանջը կատարելուց, որովհետեւ փորձով գիտեն թէ էժան չի նստի իրանց այդ բանը: Իրա համար էլ այդ շարագործները անպատժ չարութեան են իրանց դրժը: Ցան դուր կամ պատահան կտորելը, և միջի բոլոր իրեղեններ գողանալը, խորձերին, գէղերին, մարգիններին կրակ տալը, տնային զանազան կենդանիների գողանալը, եկեղեցին կողոպտելը և մարգապետութիւնը՝ սովորական բաներ են դարձել այդ աւագակների համար: Վերջապէս գիւղացիների համբերութիւնը հասնելով դիմում են Գանձակի նահանգապետին մի խնդրեալ, աղաթել իրանց վերջինչալ շարագործներին»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Թատրոնաւորների խումբը պատրաստվում է երկրորդ ներկայացում տալ յօգուտ տեղական հայոց դպրոցներին: Կը խաղան «Արեան բիծ» և «Պառաւնեքին խրատ» պիէսները: Տեղիս հայոց դպրոցների չքաւոր վիճակը և բարեկործական այլ կարիքները անհամար են դարձնում մի ներկայացում տալու յօգուտ մեր բաղմաթիւ չքաւոր ընտանիքների, որոնց թրւը օրը օր անձն է»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Անկարագրելի տխուր պատկեր է ներկայացնում այստեղի չքաւոր ընտանիքների կեանքը: Կան ընտանիքներ, որոնք հասկացողութիւն չունեն ուստի մասին, որովհետեւ շարունակ կերակրվում են միմիայն հացով: Կան ընտանիքներ, որոնք այժման ցրտի ժամանակ մի կտոր փայտ չունեն այրելու և իրանց փետացած անդամները տաքացնելու: Մի ընտանիք, որը կազմված է եօթ հոգի դաւաններից և մօրից, այսօր վերջին ծայր թշուառութեան հասած՝ ստիպված է իր ունեցած մի քանի պղնձեղէններից գրաւ դնել, օրական հացը ձարելու համար: Եւ կացարանի տեղը, տան վարձի փոխադէն, վերցնում է դողդողացող մանուկների վրայի վերջին կապիւրտը, ծախելու համար...»:

Ստացանք առաջիկայ 1891 թւի համար պատկերաբար հայոց օրացոյց («Աղբիւր» և «Տարա-դի» հրատարակութիւն): Տպված է Թիֆլիսում Տ. Նազարեանցի տպարանում: Օրացոյցը պարունակում է իր մէջ բաղմաթիւ պատկերներ: Գինը 15 կօպէկ է:

Այս օրերս հասա Թիֆլիս, մեր քաղաքի օպերային ներկայացումներին մասնակցելու համար մի նոր խաղացի երգիչ, տիկնոջ պ. Ֆրանչեսկո Պերկուսի: Երբեք կը մասնակցէ նախ «Արեա» օպերայում, ապա «Հրեւի» օպերայում, վերջապէս և «Կարմին» օպերայում:

Քանի մի օր շարունակ Ռուսաստանի պօստը չէր ստացվում Թիֆլիսում: Ասում են որ հարաւային Ռուսաստանում շատ խոր ձիւն է եկել, որը արգելում է երկաթուղային գնացքի կանոնաւոր երթևեկութեան:

Պ. Ն. Մարտիրոսեանց, Սև-Քաղաքի գործարանատէր, գրելով եկող տարվայ «Մշակի» մի օրինակին, բացի սրանից ուղարկել է մեզ 20 ռուբլի, խնդրելով որ իր անունից նուիրենք մեր լրագրի երկու օրինակը որ և է հայոց դպրոցներին: Մենք պ. Մարտիրոսեանի անունից կուղարկենք մեր լրագրի մի օրինակ՝ Գիւլիշանի մօտ գտնվող Պողոս-

Քիլիսա գիւղի միջառան դպրոցին, իսկ երկրորդ օրինակը՝ Խանքենդ աւանի ծխական դպրոցին:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Օրերումս, Թիֆլիսում առաւօտեան ժամին 10-ին յայտնվեց անհասկալի մէջ մի հայ մարդ մօտ 40 տարեկան, բաւական պատկառելի գէմբով և հանելով գրպանից մի երկար ստորագրով, առաջարկեց ինձ ստորագրել մի գումար, ապա կարողութեան, բացատրելով որ այդ փողը հասնում է նա բարեգործական նպատակով, այն է՝ Մարտիրոս (?) գիւղի ծխական ուսումնարանին: Նույնպէս համար, և իր խօսքերը ապացուցանելու համար ցոյց տուեց նա կոնսիստորիայից տուած մի վկայագիր, որով իբր թէ իրաւունք ունեւ նրան ստորագրութիւն բաց անել յիշեալ նպատակով: Անյայտ անձը անուանում էր իրան Մարտիրոս գիւղի բնակիչ Գ.—եան վաճառական: Անհասկանալի է թէ արդեօք ինչ հարկաւորութիւն կայ այդպիսի կասկածաւոր միջոցներով բարեգործական նպատակին հասնելու մար, քանի որ մենք ունենք նոյն նպատակին ծառայող աւելի օրինաւոր հիմնարկութիւններ, ինքն ինքն պ. Գ.—եան արարմունքը շանտաժայդ դիպուածում մենք կարծում ենք, որ հարկաւոր է դուռնացնել ժողովրդին և միանգամայն աղաթել նրան այդ տեսակ խաբէբայութիւններից: Նշանաւորն այն է, որ պ. Գ.—եան, ինչպէս երեւում է, որոնում է իր հարկաւորներին բացառապէս հիւանդանոցներում, որով նա առիթ է տալիս կարծել, որ նրան հարկաւոր են այն պիսի անձինք, որոնք մշտական կեցողութիւն չունենալով Թիֆլիսում, չեն կարող ճանաչել նրա անձնագրութիւնը. մի և նոյն պարտք առաջարկած է ինձ նոյն ստորագրութիւնը անցեալ տարի նոյեմբեր ամսին մի ուրիշ հիւրանոցում. նրա խօսքով այդ գործով պարագում, նա ամբողջ երեք տարի»:

ՂՓՁԱՂ գիւղից մեզ գրում են. «1850 թւին մեր գիւղում Հառիճեան ընկերութիւնը հիմնելով Հառիճոյ վանքի մօտ ծխական հոգևոր դպրոց սկսեց գիտութեան լոյս մատակարարել: Շիրակի ուսումնարան ամառը սերունդին: Այդ ընկերութեան խնամքին յանձնվեց 1868 թւին նա վանքի կուսակալութիւնը: Աղբը տեսնելով ընկերութեան ազգագուս ձգտումները՝ չը խնայել իր առատ նուիրաբաշխական օժանդակութիւնը որով պահպանվում էր դպրոցը, թէպէտ անձնական անախճակ վիճակի մէջ: Իսկ ներկայ ուսումնական տարեշրջանում կատարեալ բարեկարգութեան մէջ է մտած դպրոցը, ուսուցիչները վարձված են բաւարար ուսմանը, աշակերտները ապրում են միմիայն, նոր վանահայր Կիրիկ արեղայի անխնայ հոգացողութեան շնորհիւ: Բայց, ավստո օր մինչև այսօր աղբի մեծ մասնակցութիւնը ծանօթ չէ յիշեալ դպրոցի գոյութեան և գործունէութեան հետ. քառասուն տարեկան մէջ ոչ մի հրապարակական թերթի էջերում չէ երևացել նրա հաշիւեցուցակը, յայտնի չէ թիւով, ինչ գործողութիւն է արել այս դպրոցը համայն Ուրմիս Հառիճոյ բարեջան ընկերութիւնը շատ լաւ կաներ, եթէ բարեհաճէր գէթ մի անգամ երևան հանելու իր այս քառասունամյա գործը նշեւելը, որով թէ աղբը կուրախանար հաստատութեան առաջադիմութիւնը տեսնելու և թէ նուիրատու անձինք միմիայն չէին լինէին իրանց նուէրները ժողովրդի լուսաւորութեան համար գործադրված տեսնելով»:

ՕՐԻՍՍԱՅԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 28-ին Օրէսայի հայոց ծխական դպրոցի օգտին անցեալ տարվայ նման «Գարմարիա» դահլիճում տեղ ունեցող սերունդներին մի ներկայացում: Որովհետեւ այստեղ հայախօս օրիորդներ և տիկիններ չունէին, այդ պատճառով ընտրել էին Տէր-Կրիկ Գորանի «Կուսակալաւոր» ես էի» փողով: Կօմէդիան օրի մէջ միայն կանանց երկու կայ: Մասնակցում էին օրիորդներ Ուրմիսեան, Լազարեան, իսկ երիտասարդներից պ. Կ. Մարտիրոսեան, Բալուչեան և Շեխանց՝ որոնք արժան են շնորհակալութեան: Եթէ այս տարվայ նա կացացումը համեմատենք անցեալ տարեկանին, մենք կը գտնենք ահալին զանազանութիւն: Մինչևեւ անցեալ տարի սատարի դժուարութիւններ էին ծախվում տոմարները և այդ դժուարութիւնը կը կրում էին ուսանողները, ամբողջ օրերով նրա տները չափելով, մինչևեւ անցեալ տարի ներկայացումը լաւ եղեւ ունեցաւ միմիայն մասնա-

ար անձնատուրութեան առատաձեռնութեան չնոր-
հով, այս տարի ընդհակառակը՝ խոշորանոր
այնքան տեղի չունեցան, որովհետեւ թէ անդա-
մալ, թէ եկեղեցի հայերը մեծ համակրութեամբ
վերաբերվեցան այդ գործին. շատերը նրանցից
նոյն իսկ տոմարները իրանց ծանօթ շրջանի
մէջ տարածելու ներդրութիւնը յանձն առան: Բոլորն
համակրութիւնը պարզ էր: Դասիւնում սաղմած
ընկերները և քաղցրողները սեղանը կառա-
վարում էին յարգելի տիկիներ՝ Ե. Անուշ, Զ.
Աստուածատրեանց և Ա. Պապովեանց: Եղան և
պրիմիաներ՝ տիկին և պ. Անուշ 50 բ., Զ. Աս-
տուածատրեան՝ 25 բ., Ա. Պապովեանց՝ 25 բ.,
և խալաթով 19 բուրլի: Ակկերմանից պ. Խ.
Աստուածատրեանից 5 բ., և պ. հոգաբարձու
Աստուածատրեանից 4 բուրլի: Մի քանի հրեաներ՝ այն
է՝ պ. Խալաթ, Բոգնաշտէն, Զոնշէն, Եսկօքչաւամ
և Մ. Մարգարէ, բացի տոմարները դնելուց, ու-
ղարկեցին և նուէրներ: Մնում է մեզ ամենից
յետոյ՝ բայց բոլորից շատ յայտնի մեր խորին
շնորհակալութիւնը պ. Վ. Նիկողայարեանիցին, որը
ներկայացման աշուղտեան մէջ միանգամայն
պարտաւոր է հանդիսացաւ: Զատնիական մասը
լաւ անցաւ. երգչուհի Լիլիթկայա երգեց «Ինձ
համար չէ» և երկու ոտանաւորներ կարգաւորեցան
բաւական յաջող: պարահանդէսը շարունակեց
մինչև առաւօտեան ժամը 6: Դասիւնում ասեղ
դրելու տեղ չը կար. ժողովուրդը ուրախ արա-
մադրութեան տակ ցրուեց իր տները: Զուտ
արդիւնքը 600-ից անցնում է:

ԲԱԳՈՒՅՑ գրում են մեզ հետեւեալ. «Չափա-
զանց աննախանձելի վրձակ ունեն Բագուի ա-
ռետորական գործակալատարները. ամեն օր առաւօ-
տեան կանոնով արթնանալով և մինչև երեկոյեան
շատ ուշ լռանութիւնը մէջ մնալով՝ մեր քաղաքի
գործակալատարները պարտքն են՝ Նրանք գէթ կի-
րակի օրերն էլ միջոց չունեն քիչ հանգիստ վայե-
լիլու, քանի որ առետուրը կիրակի օրերն էլ
այստեղ շարունակվում է ի օրերի պէս: Այլ ևս չը
կարողանաւով տանել այդ տեսակ կեանքը, Բա-
գուի գործակալատարները նորերուստ մի բազմա-
ստորագիր խնդիրը սուրին քաղաքային վարչու-
թեանը, խնդրելով որ վարչութիւնը խստիւ ար-
գել է կիրակեաց առետուրը: Յանկալի է որ քա-
ղաքային վարչութիւնը ուշադրութիւն դարձնել
այդ խնդիրը վրա և գործակալատար դասը կարո-
ղանար զոնք չաքաղել մի օր հանգստութիւն վայե-
լիլ»:

Շաբաթ օր, դեկտեմբերի 22-ին, կառուածական
բանկի թատրոնում պիտի կայանայ մի հայերէն
ներկայացում, որը, վերջին ժամանակներս արդէն
հաղաւթիւտ բան է դարձել հայաշատ թիֆլիսում:
Պիտի խաղան վերջապէս Մարգարէ «Փայլուն Բղէզ»
կոմիքիան, թարգմանութիւն Զ. Մանասանի: Խա-
ղադրուելու մեծ մասամբ սիրողներն են, և այդ
արդէն մի առանձին հետաքրքրութիւն է տալիս
ներկայացման: Մեր հասարակութիւնը վարդա-
ն արդէն ստանութիւն է ցոյց տալիս գէ-
ղի անդաման հայ դերասանների ներկայացում-
ները, ուրեմն մնում է, որ նոյն հասարակութիւ-
նը մի փոքրիկ դուարձութիւն ստանալու համար
ներկայ լինի սիրողներին ներկայացումներին,
որոնք մինչև այժմ, ինչպէս փաստեց ցոյց են
տուել, ընդհանրապէս լաւ սպասարկութիւն են
թողել հասարակութեան վրա:

«Հրատարակչական ընկերութեան» վերջին ընդ-
հանուր ժողովը, որը իր սակաւամարդութեամբ
կրկին յիշեցնում է այդ ընկերութեան մուսու-
թեան նախորդ տարիները, մի վերին աստիճա-
նի օրինակելի, խելացի և օգտակար վճիռ է կայաց-
րել: «Ճիշդաբար գրեթէ չը տալ հասարակական է-
մանադրին դրադարաններին: Չանազան տեղերում
մարդիկ կապել կօպել փող հաւաքելով, հազար
և մի աղքատներին յաղթելով, աշխատում են ժո-
ղովրդի համար էմանազին գրադարաններ հիմ-
նել իսկ հայոց «Հրատարակչական ընկերութիւնը»
մերժում է մի փոքրիկ օգնութիւն մատուցանել
հասարակական գրադարանների նման համակերպի
հիմնարկութիւններին, ձվ գիտէ թէ ինչ ան-
վրա պատճառաբանութիւններով, և իր զբերը
փետցնում է պահանջներով, փառ և միջերի
կերակուր դարձնելով: Չը լինի թէ «Հրատարակ-
չական ընկերութեան» ղեկավարները մի և նոյն
ժամանակ և «Ներդրումներ» հովանաւորութեան ըն-
կերութեան» անդամներ են, որ չեն կամենում պա-

հետնորդը գրեթէ հանել, որպէս զի միները
քաղցած չը մնան: Եթէ այդ է մերժելու պատճա-
ռը, և ուրիշ խելացի պատճառ չը կայ, մենք դրա
դէմ ոչինչ չունենք:

Թիֆլիսի կուրքներում սկսվեցան դեկտեմբերին
յատուկ դուարձութիւնները — դիմակահան-
դէսները: Ժողովարանումն էլ դեկտեմբերի
18-ին դիմակահանդէս էր նշանակված: Նայելով դի-
մակահանդէսներում հաւաքված դիմակաւորված կա-
նանց հազուադէպ, մարդ ինքն իրան հարցնում է.
— այս կանայք մի լուրջ գործով չեն զբաղվում, մի
առանձին բան չեն շինում, ուրեմն ողբան ան-
չնոր՝ արարածներ պէտք է լինեն, որ ամբողջ
օրը շորերի, պարահանդէսների և դիմակահանդէս-
ների մասին մտածելով, դարձեալ չեն կարողանում
փողը ի շատէ հնորհով, արամիտ կերպով հագնու-
լու և դիմակահանդէս են գալիս մեծ մասամբ չար-
սաղմները մէջ փաթկալով, զիւրից մինչև ոտը
կապկապած: Բացի չոք սենեակների մէջ խելագի-
ւուց, դրանք, ի հարկէ, ուրիշ ոչինչ չունենում
թիւն չեն ստանում:

Գնաթիւթիս ԵՐԵՒԱՆԻ կուրքի պատերի մէջ
վերջին օրերս մի առանձին կենդանութեան նը-
շաններ են տեղի ունեցել, և դրա հետեւեալը այն
է եղել, որ կուրքի չորս անդամները զրկվել են
անդամակցութիւնից: Ահա թէ ինչ են գրում մեզ
երեւանից. «Կուրքի անդամները ընդհանուր ժողովի
վճուրկ կուրքի անդամակցութիւնից զրկվեցան՝
երեք պաշտօնեաներ, որոնցից մէկը կուրքի ստար-
շիւնա էր, և մի մասնաւոր անձն: Պատճառը — դը-
րանց չնորհով կուրքի մէջ պատահած անախորժ
դէպքերն են»:

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 20-ին, բաց-
վում է Թիֆլիսում Ֆիւրերի ցրելը, որտեղ և կը
լինի առաջին ներկայացումը:

Վաղը, ուրբաթ օր, Լիւբիմովի օպերետային
խումբը տալիս է իր վերջին ներկայացումը, որը կը
լինի կառավարչի պ. Արսիւ և պ. Կարենի
բեմադրութիւնը: Այսուհետեւ խումբը ուղևորվում է
դէպի Բագու:

Երեքշաբթի, դեկտեմբերի 18-ին, յօգուտ Բու-
բլիտտովի Թիֆլիսի օպերային թատրոնում ներ-
կայացրին «Աֆրիկուհի» օպերան: Որպէս անցեալ
անգամ յիշեցնեմ, տ. Ֆլաւա-Վանդերլիք բեմադրեց
ժամանակ, հասարակութիւնը ողբերկով ցոյցեր
արեց և բազմաթիւ թանգաղին ընծաներ մատու-
ցեց նրան, նոյնը մասամբ սպասում էինք և Բու-
բլիտտովի վերադարձումը: Բայց ողբան եղաւ մեր
գարմանը, երբ տեսանք որ մի քանի դալիսայ
պատկերներ մի 50—60 բուրլու ընծաներ միայն
տուեցին երգչին: Չը նայելով դրան, պ. Բուբլիտ-
տով մեծ աշուղտեամբ կատարեց իր դերը և հա-
սարակութիւնը, մանաւանդ երրորդ գործողու-
թիւնից յետոյ, բուռն ծափահարութիւններով վար-
ձաւորեց նրան: Պէտք է նկատել, որ ընդունելի
բարեօնեան խառնակութիւնը մեր օպերայում շատ
անախորժ սպասարկութիւն է գործում, և երբեմն,
մինչև անգամ հասարակութեան ծիծաղ է շարժում:
Օրինակ «Աֆրիկուհի» օպերան ներկայացնելիս, ե-
րբ ընդունելով էին երգում՝ խաղերէն, ֆրանսերէն
և ռուսերէն: Թատրոնը կատարելապէս լի էր:

Սարկաւաթ Զ. Նադարեանց մեզ խնդրում է
տպել հետեւեալ. «Մեր օրացոյցների մշտական
գնդակների մեզ ուղարկված և ուղարկելի նամակ-
ներին մի անգամից պատասխանած լինելու հա-
մար՝ սրանով պատիւ ունենը յայտնելու, որ մեր
օրացոյցը, մեղանից անկախ պատճառներով, առա-
ջիկայ 1891 թուականին լոյս չի տեսնի»:

Վերջապէս երեկ, 19-ին դեկտեմբերի, 3 օրվայ
ընդմիջումից յետոյ, Թիֆլիսում ստացվեց Ռու-
սաստանի պոստը:

Ստացանք ԱՍՏՐԱԽԱՆԻՑ 10 բուրլի, որպէս զի
ուղարկեց այդ փողով «Մշակի» տարեկան մի
օրինակ Սաղարեյօ զիւղի դպրոցին: Այդ օրինակը
նուրբում է դպրոցին պ. Ղարաբան Տէր-Գաբրիէ-
լեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՅՐԱՆՍԻԱՅԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ
ՆԸ

Մի քանի տարի է արդէն, որ հանրապետական
Ֆրանսիան մօտիկ կերպով բարեկամացել է Ռու-
սաստանի հետ:

Այդ ամենը գիտեն:
Ֆրանսիայի մայրաքաղաքում, թէ դանազան
կուսակցութիւնները և թէ նոյն իսկ կառավարու-
թեան ներկայացուցիչները յարմար առիթը ձեռ-
քից բաց չեն թողնում արտայայտելու բարեկա-
մական զգացմունքներ դէպի Ռուսաստանը՝ թէ
պատահական դանազան ցոյցերով թէ ընկերու-
թիւններ կազմելով, թէ նոյն իսկ զրականութեան
մէջ:

Այդ էլ ամենքը գիտեն:
Սակայն գիտնալով այդ բոլորը, զուգէ շատերը
չը գիտեն, որ այդ բարեկամութեան դէմ է Գեր-
մանիան, այն Գերմանիան, որ 70-ական թուական-
ներից սկսած, ամեն ջանք գործ է դնում, որպէս
զի բոլորովին կղզիացնէ Ֆրանսիան, և թոյլ չը
տալ նրան կապվելու ուրիշ օր և է զօրեղ պե-
տութեան հետ, որովհետեւ այդ կապը՝ ոյժ կը
նշանակէ, իսկ Ֆրանսիայի ուժեղանալը — գաղտ-
նիք չէ — փութ է Գերմանիայի աչքում:

Գերմանական լրագիրները, որոնք միշտ յուզված
կերպով են նայել ֆրանս-ռուսական բարեկամու-
թեան վրա, վերջին ժամանակներս աւելի են
սկսել յուզվել: Լրագիրներից շատերը մի անքա-
կան բան էին համարում այն երևոյթը, որ հան-
րապետական Ֆրանսիան կարողանում է այնքան
մօտիկ բարեկամ լինել Ռուսաստանի հետ, համա-
րում էին այդ բարեկամութիւնը արհեստական և
հիմնված զլիաւորապէս այն թշնամութեան վրա,
որ կայ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ: «Գերմա-
նիան դաշն է կապում Աստորիայի և Իտալիայի
հետ, — ասում էին շատերը, — Ֆրանսիան էլ ձեռք
է մեկնում Ռուսաստանին»:

Գերմանական լրագիրների անհանգիստ լինելու
գլխաւոր պատճառը վերջին ժամանակներս այն
է, որ ֆրանսիական հանրապետութիւնը չափա-
ւոր պահպանողական բնաւորութիւն է ստացել, և
ուրեմն Ռուսաստանը կարող է աւելի մօտիկ բա-
րեկամ դառնալ պահպանողական հանրապետու-
թեան հետ, քան թէ աղատամիտ և արմատական
հանրապետութեան հետ:

Բանը նրանումն է, որ ֆրանսիական պարլա-
մենտը մէջ նորերս մի ներքին փոփոխութիւն է
եղել: Միապետականները, որ մինչև այժմ երա-
զում էին թագաւորութիւն հաստատել Ֆրանսիա-
յում, տեսնելով որ իրանց այդ ցնորքը միշտ
ցնորք կը մնայ, տեսնելով թէ ինչպէս լայնա-
ռակից Բուլանժէն իր միապետական ձգտումնե-
րով, միանգամայն դէն են գցել իրանց զլիւր
թագաւորութիւն հաստատելու միտքը, և ընդու-
նելով հանրապետութիւնը, աշխատում են մի քիչ
իրանց ցանկացած գոյնը տալ այդ հանրապետու-
թեան, այն է նրան դարձնել պահպանողական
հանրապետութիւն: Այդ նպատակին հասնելու
համար, նրանք, այդ միապետականները միացել
են չափաւոր հանրապետականների հետ: Այդպի-
սով պարլամենտում արմատական կուսակցութիւ-
նը կորցնում է իր ոյժը, որովհետեւ այժմ նրան
հակառակ են թէ միապետականները և թէ չա-
փաւոր հանրապետականները, որոնք առաջ ա-
ռանձին առանձին էին գործում, իսկ այժմ միա-
ցել են:

Ահա այդ երևոյթի վրա հիմնվելով, գերմանա-
կան լրագիրները ասում են. — ուրեմն սրանից յե-
տոյ ֆրանսիական հանրապետութիւնը պահպանու-
ղական կերպարանք կունենայ, նա արմատական
չի լինի, և ուրեմն Ռուսաստանը աւելի մօտիկ
կերպով կը բարեկամանայ այդ պահպանողական
հանրապետութեան հետ, քան թէ կարող էր բա-
րեկամանալ արմատական հանրապետութեան
հետ:

Թէ որքան ճիշդ է այդ ենթադրութիւնը, այդ
թող իրանք գերմանական լրագիրները պարզեն, —
այսքանը միայն ճիշդ է, որ ֆրանս-ռուսական
բարեկամութիւնը պահպանելու համար Ֆրանսիա-
յում բաւական աշխատում են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պոլսից հեռագրում են մայրաքաղաքի
լրագիրներին, «Թիւրքաց կառավարութիւնը Եւրո-

պայի իր ներկայացուցիչներին ուղղված մի շրջա-
բերականով բացատրում է Բ. Գրան և յունաց
պատրիարքի մէջ եղած ընդհարման պատճառնե-
րը»:

— Անգլիական «Truth» լրագիրը լսել է, որ
յունական ամսին գերմանական կայսրը ուղեւորվե-
լու է Կանն:

— Հռոմից հեռագրում են, որ Տուրինի մէջ
տեղի ունեցաւ խառնական բանտրների մի մեծ
ցոյց: Մօտ 7,000 բանտրներ առանց գործի են
մնացել: Նոյն դրութեան մէջ են և Միլանի ու
Ջենովայի բանտրները:

— Վիեննայի ու Պիշտի մէջ եղած տարածու-
թեան վրա միտք կայ կառուցանելու ելելարա-
կան երկաթուղի: Երթեկող զնացքը անցնելու է
100 վերստ մի ժամկայ մէջ: Էլեկտրական երկա-
թուղին կառուցանելու ծախսը հասնելու է 38
միլիօն ֆլորին գումարի:

— Պարիզից հաղորդում են, որ Վիեննա կայսրը,
որը դիտաւորութիւն ունի ձմեռայ մի մասը
անցնել Ֆրանսիայի Կանն քաղաքում (Միջերկրա-
կան ծովի մօտ) միտք ունի, ինչպէս ասում են,
մի քանի ժամանակ Պարիզումն էլ անցկացնել,
թէ և, ի հարկէ, ինչ օգնի օտ: Ֆրանսիացիք,
ինչպէս կարծում են, կարող են նրա դէմ մի
թշնամական ցոյց անել:

— Պարիզ այս օրերս մի ատենաբանութիւն
արաւ կիլիկիանում, յայտնելով որ յոյս ունի յաղ-
թող հանդիսանալու «Daily News» հաղորդում է
որ կիլիկիանում կատարված ընտրութիւնների հե-
տեւեւը նպաստաւոր է Գլադստօնի կուսակցու-
թեան համար, ուրեմն և իրանդիայի ինքնավա-
րութեան գաղափարի համար:

— Վիեննայում տեղեկութիւն է ստացված, որ
Բոլզարիայում միջխտորական ճգնաժամ տեղի ու-
նեցաւ:

— Պարիզում շարունակվում է դատը այն անձանց
դէմ, որոնք նպաստեցին գնեկալ Սերվիլիստովին
սպանող Պոլեւսկու փախչելուն:

— Իլլիան Բիսմարկ վերջին ժամանակներս յա-
ճախ է տեսնում «Hamburger Nachrichten»
լրագիր հրատարակչի հետ: Նա, ինչպէս լսվում
է, դիտաւորութիւն ունի շարունակել կաղաքական
ընդդիմադրութիւնը գերմանական կառավարու-
թեան այժման ընթացքի դէմ, բայց օրանից
ձգտելով ընտրված լինել իշխատաւոր, որպէս
պատգամաւոր, — այժման իշխատապի արձակվե-
լու դէպքում՝ նա կը կազմակերպի մի ընդար-
ձակ և զօրեղ պահպանողական կուսակցութիւն,
որպէս զի կարողանայ դիմարել այժման կա-
ռավարութեան վերանորոգիչ ձգտումներին:

— Լրագիրները հաղորդում են, որ այս դարնա-
նը գերմանական կառավարութիւնը ձեռնամուկ
է լինելու՝ ռուսաց սահմանին մօտ գտնվող Բրես-
լաւ քաղաքը առաջնակարգ պատերազմական
բերդ դարձնելու:

— Պարիզ այս օրերս լուսնում մի ճառ ար-
տասանելով ասեց, որ Եւրոպային կարելի է
գոհացնել միմիայն անկախ պարլամենտով:

ԻՍԱՐՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ-Խորկում հրատարակվող «The Herald of
Health» ամսագիրը իր իւրաքանչիւր համարում
ստացրում է մի նկատողութիւն՝ հետեւեալ վեր-
նագրով. «Մեր կանօնները առողջութիւնը պահ-
պանելու համար: 1) Կանօնաւոր եղէք ձեր սո-
վորութիւնների մէջ: 2) Եթէ հարաւոր է, իւրա-
քանչիւր զիշեր պտուկեցէք քնելու մի և նոյն ժա-
մին: 3) առաւօտեան զարթնելուն պէս վերկա-
ցէք: 4) լուացվեցէք իսկոյն և եթ սպունգով սա-
ռը կամ տաք ջրով, ապա ցամաքեցրէք կաշին ե-
րեսսրբիչով: 5) կերէք առողջարար կերակուրներ: 6) ձեր
առաւօտեան նախաճաշիկը պտուկներով
սկսեցէք: 7) երբեք գործ մի սկսէք իսկոյն ճաշից
յետոյ: 8) ողելից ըմպելիքներ չափաւոր գործա-
ծեցէք տարվայ բոլոր եղանակներին: 9) միշտ ա-
ւելի լաւ է եթ տուած կամ մաքրած ջուր խմել: 10) բացօդայ
վարժութիւններ արէք միայն ցերեկով: 12) միշտ լաւ
պահպանեցէք ոտները խոնաւութիւնից և ցրտից
և նրանց արեան շրջանաւորութիւնը մի խանգա-
րէք նեղ կոշիկներով: 13) տարին տասերկու ա-
միս բրդէ ֆուֆայիկա հագէք: 14) աշխատեցէք,
որ ձեր ննջարանների և առանձնասենեակի օդը
լաւ մաքրված լինի, բայց մանաւանդ որ գաղերը
չը կարողանան տակից սենեակը մտնել: 15) մաքրեցէք
ձեր ատամները օրական գոնէ երկու
անգամ, առաւօտեան և երեկոյեան: 16) շատ
շտապով մի ուտէք, — դա խանգարում է ընկալն
մարտդութիւնը: 17) ապահովացրէք ձեզ մի հե-
տաքրքիր զբաղմունքով մինչև անգամ ծերութեան
ժամանակ. պահպանեցէք ձեր ուղեղի մշտական
գործունէութիւնը: Հանգստութիւնը, — ժամագ է:

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. 438.